

# **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1604-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

\_\_\_\_\_ 2023 թվականի N \_\_\_\_ Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1604-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դեկլարվելով Ստորմատիվ իրավական ակտերի մասին՝ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և Ավտոմոբիլային տրանսպորտի մասին՝ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Ավտոկայարանային գործունեության կարգը հաստատելու մասին» N 1604-Ն որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) 10-րդ կետից հետո լրացնել նոր 10.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

10.1. Ավտոկայարանները և ավտոկայանները պետք է ապահովեն հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի համար բնակչության մնացած խմբերին համահավասար կենսագործունեության պայմաններ ՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

2) 16-րդ կետից հետո լրացնել նոր 16.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

16.1. Ավտոկայարանները և ավտոկայանները պետք է ապահովեն իրենց կողմից մատուցվող ծառայությունների (դրամարկղերը, սանհանգույցները, սպասասրահները, բուժկետերը, ուղևորային հարթակները և այլ ծառայությունները)՝ հասանելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց:

2) 22-րդ կետից հետո լրացնել նոր 23-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

23. Ավտոկայարանները և ավտոկայանները պետք է ապահովեն համապատասխան միջոցներով տարբեր խմբերի հաշմանդամություն ունեցող

անձանց անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը և արդյունավետ կողմնորոշման հնարավորությունը:[].

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ  
Փաշինյան**

**Ն.**